

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ դեկտեմբեր 2018թ.

N -----Ն

ՈՐՈՇՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական տուրքերի 2019 թվականի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 75000 /յոթանասունհինգ հազար/ դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 700000 /յոթ հարյուր հազար/ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 21000 /քսանմեկ հազար/ դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ.

2) Երևանի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման

աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

4) Երևանի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝ 600000 /վեց հարյուր հազար/ դրամ.

5) Երևանի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 87500 /ութսունյոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

6) Երևանի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

7) Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն **N1 հավելվածի.**

8) Երևանի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի

կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն **N 2 հավելվածի**։

9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը սահմանվում է՝ 500 /հինգ հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար։

10) Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամ,

դ. խաղատների համար՝ 3000000 /երեք միլիոն/ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ։

11) Երևանի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն **N 3 հավելվածի**։

12) Երևանի վարչական տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը՝ յուրաքանչյուր տնային կենդանի պահելու համար, սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ։

13) Երևանի ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ,

- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ (Մյասնիկյան պող.՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր) դրամ,

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3000 /երեք հազար/դրամ (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ),

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ։

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 4000 /չորս հազար/ դրամ։

- Նոր-Նորք վարչական շրջանի տարածքում՝ 4000 /չորս հազար/ դրամ (Մյանհիկյան պող.՝ 7000 /յոթ հազար/ դրամ),

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 4000 /չորս հազար/ դրամ (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ 7000 /յոթ հազար/ դրամ),

-Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 7000 /յոթ հազար/ դրամ.

գ. այլ արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2000 /երկու հազար/ դրամ,

- Նոր-Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2000 /երկու հազար/ դրամ (Մյանհիկյան պող.՝ 2625 /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ),

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 2200 /երկու հազար երկու հարյուր/ դրամ (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ 2625 /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ),

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 2625 /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ.

դ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ Երևանի վարչական տարածքում՝ այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ Երևանի վարչական տարածքում՝ այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Երևանի խորհրդանիշները (գինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամ.

15) Երևանի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար տեղական տուրքը սահմանվում է՝ 10000 /տաս հազար/ դրամ.

16) Երևանի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.

17) Երևանի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տասը միլիոն/ դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 14000000 /տասնչորս միլիոն/ դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 20000000 /քսան միլիոն/ դրամ.

18) Երևանի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ.

19) Երևանի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,

բ) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

2. Սահմանել, որ.

1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով).

2) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշմամբ սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը.

3) սույն որոշմամբ սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական տուրքի գումարը չվճարելու դեպքում.

4) սույն որոշման 1-ին կետի 19-րդ ենթակետը ուժի մեջ է մտնում 26.09.2019 թ.:

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական տուրքերի դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին համապատասխան՝ Երևանի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը /օրենքի նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածում/։ Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ։ Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև կիրառելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով արմագրված՝ տարբեր տուրքերի համար գոտիավորման սկզբունքը՝ որոշման նախագծով սահմանվել են Երևան համայնքում տեղական տուրքերի 2019 թվականի դրույքաչափերը։

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված են, ըստ տուրքերի տեսակների, տուրքերի նվազագույն և առավելագույն դրույքաչափերը։

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

– Նշված հոդվածով սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են սահմանվել 1.5 անգամ, իսկ Երևան քաղաքում՝ 3.0 անգամ ավելի, բացառությամբ 1-ին մասի 1-3-րդ կետերի։

– Նշված հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերում՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերում՝ 1.0-3.0, իսկ Երևան քաղաքում՝ 1.0-7.0 գործակիցների կիրառմամբ։

– Նշված հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափը Երևան քաղաքում՝ ավագանու որոշմամբ, ըստ գոտիավորման, կարող է սահմանվել մինչև 5.0 անգամ, իսկ «բ» ենթակետով սահմանված դրույքաչափը՝ մինչև 10.0 անգամ ավելի։

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է 2019 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերում կատարել ներքոհիշյալ փոփոխությունները.

– «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետի գ. մասում կիրառել առավելագույն գործակիցներ, տեղական տուրքի դրույքաչափերը սահմանելով համապատասխանաբար 21000 /քսանմեկ հազար/ դրամ և 35000 /երեսունհինգ հազար/ դրամ,

– նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համար նույնպես կիրառել առավելագույն գործակից, դրույքաչափը սահմանելով 600000 /վեց հարյուր հազար/ դրամ,

– օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի համար կիրառել հետևյալ դրույքաչափերը.

- առևտրի օբյեկտների համար՝ 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ,
- հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,
- բաղնիքների (սաունաների) համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամ,
- խաղատների համար՝ 3000000 /երեք միլիոն/ դրամ,
- շահումով խաղերի համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,
- վիճակախաղերի համար՝ 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ.

– օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ ենթակետի համար նույնպես կիրառել առավելագույն գործակից, դրույքաչափը սահմանելով 300000 /երեք հարյուր հազար/ դրամ,

Հաշվի առնելով 21.03.2018 թվականի «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջը Երևան քաղաքի տեղական տուրքերում սահմանվել է տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար նախատեսված տուրք, որի համար կիրառվել է առավելագույն գործակից, դրույքաչափը սահմանելով 300000 /երեք հարյուր հազար/ դրամ,

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև Երևան համայնքի համաչափ զարգացման սկզբունքը, սահմանվել է գոտիավորում՝ ոգելից և ակոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի, արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու ու Երևան քաղաքի վարչական տարածքում հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար, նախատեսված տեղական տուրքերի մասով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում 11.09.2018 թվականին կատարված փոփոխությունը՝ համայնքի տարածքում սահմանափակման ենթակա գործունեության թույլտվության համար, ուժի մեջ է մտնելու 26.09.2019 թվականից:

Ստորև ներկայացվում է օրենքով սահմանված կարգով Երևան քաղաքում նախատեսված տեղական տուրքերի առավելագույն դրույքաչափերը և 2019 թվականի նախագծով առաջարկվող (նախատեսվող) դրույքաչափերը.

	Տեղական տուրքի անվանումը	օրենքով Երևան քաղաքում նախատեսված առավելագույն դրույքաչափերը	Նախագիծ, 2019թ. նախատեսված դրույքաչափերը
1	Նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար		
ա	մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդ. մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15,000 (գործակից-7)	75,000
բ	200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	30,000 (գործակից-7)	150,000
գ	500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50,000 (գործակից-7)	250,000
դ	1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50,000 (գործակից-7)	350,000
ե	3000 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	100,000 (գործակից-7)	700,000
զ	մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շին. համար	3,000 (գործակից-7)	21,000
է	20 և ավելի քմ ընդ. մակերես ունեցող շենքերի և շին. համար	5,000 (գործակից-7)	35,000
2	շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխ. թույլտվության համար	3,000 (գործակից-7)	15,000
3	շենքերի, շինությունների և քաղ. այլ օբյեկտների քանդման թույլտվության համար	5,000 (գործակից-7)	25,000
4	հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար	200,000 (գործակից-3)	600,000
5	խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեք. տեխ. սպասարկման և նորոգման ծառ. օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար	60,000 (գործակից-3)	87,500
6	թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրակ. թույլտվ. համար	50,000 (գործակից-3)	50,000

7	ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմ. դեպքում	համաձայն հավելվածի	
8	ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմ. դեպքում	համաձայն հավելվածի	
9	բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար	350 (գործակից-3)	500
10	առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխ. թույլտվ. համար		
ա	առևտրի օբյեկտների համար	5,000-50,000 (գործակից-5)	120,000
բ	հանր. սննդի և զվարճանքի համար	25,000-100,000 (գործակից-10)	250,000
գ	բաղնիքների համար	200,000-500,000 (գործակից-3)	1,400,000
դ	խաղատների համար	500,000-1,000,000 (գործակից-3)	3,000,000
ե	շահումով խաղերի համար	250,000-500,000 (գործակից-3)	1,500,000
զ	վիճակախաղերի համար	100,000-150,000 (գործակից-3)	450,000
11	հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար	համաձայն հավելվածի	
12	տնային կենդանիներ պահելու թույլտվության համար	5,000 (գործակից-3)	5,000
13	արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		
ա	մինչև 20 տոկոս ալկոհոլային խմիչքի համար	2,000 (գործակից-3)	2,500-3,500
բ	թունդ ալկոհոլային խմիչքի համար	3,500 (գործակից-3)	4,000-7,000
գ	այլ արտաքին գովազդի համար	500-1,500 (գործակից-3)	2,000-2,625
դ	սոցիալական գովազդի համար	0 (գործակից-3)	0
ե	դատարկ գովազդային վահանակների համար	տվյալ վարչական տարածքում գործող այլ արտաքին գովազդի 25 %-ի չափով	500-656
զ	իր կազմակերպության գովազդը տարածող գովազդակրի համար	տվյալ վարչական տարածքում գործող այլ արտաքին գովազդի 10 %-ի չափով	200-262
14	Երևանի խորհրդանիշները (գինանշան, անվանում և այլն), ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվ. համար	100,000 (գործակից-3)	300,000
15	մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար	10,000 (գործակից-3)	10,000

16	քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար	500,000 (գործակից-3)	1,500,000
17	մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար	3հա-5հա-2,500,000 5հա-7հա -5,000,000 7հա-10հա-7,000,000 10հա-ից ավել-10,000,000 (գործակից-3)	3հա-5հա-5,000,000 5հա-7հա -10,000,000 7հա-10հա-14,000,000 10հա-ից ավել-20,000,000
18	տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվ. համար	50,000 – 300,000 (գործակից-3)	300,000
19	սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլվ. համար		
ա	կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար	30,000-50,000 (գործակից-3)	150,000
բ	հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար	300,000-500,000 (գործակից-3)	1,500,000

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքում տեղական տուրքերի 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքում տեղական տուրքերի 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված N1

Երևան քաղաքի ավագանու

2018 թվականի դեկտեմբերի –ի

N -Ն որոշման

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Երևան համայնքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար

1. Երևան համայնքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

գոտի	մինչև 26 քմ.	26-50 քմ.	50-100 քմ.	100-200 քմ.	200-500 քմ.	500 և ավելի քմ.
1-ին	17,500	22,750	35,000	43,750	78,750	175,000
1-ին բակային	14,000	18,200	28,000	35,000	63,000	140,000
2-րդ	10,500	13,650	21,000	26,250	47,250	105,000
2-րդ բակային	8,225	10,692	16,450	20,562	37,012	82,250
3-րդ	6,825	8,872	13,650	17,062	30,712	68,250
4-րդ	4,200	5,460	8,400	10,500	18,900	42,000

2. Սույն հավելվածի իմաստով գոտիները ներառում են հետևյալ փողոցները և տարածքները.

1) 1-ին գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Կենտրոն	Աբովյան փող.
Կենտրոն	Ագաթանգեղոսի փող.
Կենտրոն	Ալեք Մանուկյան փող.
Կենտրոն	Ամիրյան փող.
Կենտրոն	Արգիշտի /Նախկին Խորհրդարանի/ փող.
Կենտրոն	Բայրոնի փող.
Կենտրոն	Բուզանդի փող.
Կենտրոն	Գրիգոր Լուսավորչի փող.
Կենտրոն	Եզնիկ Կողբացու փող.
Կենտրոն	Եր. Քոչարի փող.
Կենտրոն	Զաքյան փող.
Կենտրոն	Թումանյան փող.
Կենտրոն	Թամանյան փող.

Կենտրոն	Իսահակյան փող.
Կենտրոն	Իտալիայի փող.
Կենտրոն	Լեոյի փող.
Կենտրոն	Խանջյան փող.
Կենտրոն	Խորենացի փող.(Սարյան փողոցից մինչև Նար- Դոս փողոց)
Կենտրոն	Կորյունի փող.
Կենտրոն	Հանրապետության փող.
Կենտրոն	Հերացու փող.
Կենտրոն	Հին Երևանցու փող.
Կենտրոն	Հյուսիսային պող.
Կենտրոն	Մ. Գրիգորյան փող.
Կենտրոն	Սարյան փող.
Կենտրոն	Մաշտոցի պող.
Կենտրոն	Մարշալ Բաղրամյան պող.
Կենտրոն	Մոսկովյան փող.
Կենտրոն	Նալբանդյան փող.
Կենտրոն	Նար-Դոսի փող.
Կենտրոն	Չարենցի փող.
Կենտրոն	Պարոնյան փող. (Գ.Լուսավորիչ փող. մինչ Ձորափի փողոց)
Կենտրոն	Պուշկինի փող.
Կենտրոն	Սայաթ-Նովայի պող.
Կենտրոն	Վ. Սարգսյան փող.
Կենտրոն	Վարդանանց փող.
Կենտրոն	Տերյան փող.
Կենտրոն	Տիգրան Մեծի պող. (Հանրապետության
Կենտրոն	Հրապարակից մինչև Նար-Դոս փողոց)
Կենտրոն	Տպագրիչների փող.
Կենտրոն	Արամի փող.
Կենտրոն	Բեյրութի փող.
Կենտրոն	Դեղատան փող.
Կենտրոն	Զորյան փող.
Կենտրոն	Իսրայելյան փող.
Կենտրոն	Ձորափի փող.
Կենտրոն	Մելիք-Ադամյան փող.
Կենտրոն	Շարիմանյան փող.
Կենտրոն	Ֆիրդուսու փող.
Կենտրոն	Ավագ Պետրոսյան փող.
Կենտրոն	Գ. Քոչարի փող.
Կենտրոն	Մհեր Մկրտչյան փող.
Կենտրոն	Սպենդիարյան փող.
Կենտրոն	Քաջազնունու փող.
Նոր Նորք	Գայի պող.
Նոր Նորք	Մյասնիկյան պող.
Շենգավիթ	Էջմիածնի խճուղի
Շենգավիթ	«Զվարթնոց» օդանավակայան
-	Հրազդանի կիրճ.(ամբողջ երկայնքով մինչև Երևանյան լիճ)

2) 2-րդ գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Աջափնյակ	Աշտարակի խճ.
Աջափնյակ	Բաշինջաղյան փող.
Աջափնյակ	Գրիգոր Հասրաթյան փող.
Աջափնյակ	Լենինգրադյան փող.
Աջափնյակ	Հալաբյան փող.
Աջափնյակ	Մազմանյան փող.
Աջափնյակ	Մարգարյան փող.
Աջափնյակ	Շինարարների փող.
Աջափնյակ	Շիրազի փող.
Աջափնյակ	Ջանիբեկյան փող.
Աջափնյակ	Սեբաստիայի փող.
Աջափնյակ	Բեկնազարյան փող.
Ավան	Աճառյան փող.
Ավան	Մյասնիկյան պող.
Ավան	Մարշալ Բաբաջանյան փող.
Ավան	Մարշալ Խուդյակովի փող.
Արաբկիր	Ազատության պող.
Արաբկիր	Բարեկամության հրապարակ
Արաբկիր	Զարյան փող.
Արաբկիր	Կասյան փող.
Արաբկիր	Կիևյան փող.
Արաբկիր	Կոմիտասի պող.
Արաբկիր	Հ. Հակոբյան փող.
Արաբկիր	Հր. Քոչարի փող.
Արաբկիր	Վ. Փափազյան
Արաբկիր	Մարշալ Բաղրամյան պող.
Արաբկիր	Պռոշյան փող.
Արաբկիր	Վաղարշյան փող.
Արաբկիր	Թբիլիսիի խճ.
Արաբկիր	Բաբայան փող.
Դավթաշեն	Եղվարդի խճ.
Դավթաշեն	Սասնա Ծռեր փող.
Դավթաշեն	Իոսիֆյան փող.
Դավթաշեն	Տ. Պետրոսյան փող.
Էրեբունի	Ազատամարտիկների պող.
Էրեբունի	Աթոյան փող.
Էրեբունի	Այվազովսկու փող.
Էրեբունի	Արցախի պող.
Էրեբունի	Գաջեգործների փող.
Էրեբունի	Դավիթ-Բեկի փող.
Էրեբունի	Էրեբունի փող.
Էրեբունի	Խորենացու փող.
Էրեբունի	Քրիստափորի փող.
Էրեբունի	Մուրացանի փող.

Էրեբունի	Ռոստոմյան փող.
Էրեբունի	Տիգրան Մեծի պող
Էրեբունի	Տիտոգրադյան փող.
Էրեբունի	Խաղաղ Դոնի փող.
Էրեբունի	Բելինսկու փող.
Էրեբունի	Նուբարաշենի փող.
Էրեբունի	Սասունցի Դավթի փող.
Կենտրոն	Արշակունյաց պող.
Կենտրոն	Բրյուսովի փող.
Կենտրոն	Դ. Դեմիրճյան փող.
Կենտրոն	Ծիծեռնակաբերդի խճ.
Կենտրոն	Ծովակալ Խակոբի պող.
Կենտրոն	Մյասնիկյան պող.
Կենտրոն	Պռոշյան փող.
Կենտրոն	Սարալանջի փող.
Կենտրոն	Քրիստափորի փող.
Կենտրոն	Անտառային փող.
Կենտրոն	Պարոնյան (Զորափի փողոցից դեպի Պռոշյան փող.)
Կենտրոն	Խորենացու փող.(Նար-Դոս փող. դեպի Խորենացու 4-րդ նրբ.)
Կենտրոն	Տիգրան Մեծի (Նար-Դոս փող. դեպի Քրիստափորի փողոց)
Կենտրոն	Աթենքի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Ա. Բաբաջանյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Անդրանիկի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Լենինգրադյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Սեբաստիա փող.
Մալաթիա-Սեբաստիա	Սվաճյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Տիչինայի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Րաֆֆու փող.
Մալաթիա-Սեբաստիա	Խակոբի պող.
Մալաթիա-Սեբաստիա	Գուսան Շերամի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Մալաթիայի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Օհանովի փող.
Նոր Նորք	Թևոսյան փող.
Նոր Նորք	Բագրևանդի փող.
Նոր Նորք	Արտ. Միկոյան փող.
Նոր Նորք	Ս. Սաֆարյան փող.
Նոր Նորք	Դավիթ-Բեկի փող.
Նոր Նորք	Քոչինյան փող.
Նորք-Մարաշ	Արմենակ Արմենակյան փող.
Նորք-Մարաշ	Դավիթ Բեկի փող.
Նորք-Մարաշ	Հովսեփյան փող.
Շենգավիթ	Արշակունյաց պող.
Շենգավիթ	Արտաշատի խճ.
Շենգավիթ	Արտաշիսյան փող.
Շենգավիթ	Բագրատունյաց փող.
Շենգավիթ	Գարեգին Նժդեհի փող.
Շենգավիթ	Մանանդյան փող.

Շենգավիթ	Մայիսի 9 փողոց
Շենգավիթ	Նորագավիթ 1-ին փող.
Շենգավիթ	Շիրակի փող.
Շենգավիթ	Տարոնցու փող.
Շենգավիթ	Եղբայրության փող.
Շենգավիթ	Թամանցիների փող.
Շենգավիթ	Չեխովի փող.
Շենգավիթ	Քրիստափորի փող.
Քանաքեռ-Զեյթուն	Ազատության պող.
Քանաքեռ-Զեյթուն	Դավիթ Անհաղթի փող.
Քանաքեռ-Զեյթուն	Թբիլիսիի խճ նրբ.
Քանաքեռ-Զեյթուն	Ռուբինյանց փող.
Քանաքեռ-Զեյթուն	Սևակի փող.
Քանաքեռ-Զեյթուն	Զաքարիա Քանաքեռցու /Սարկավագի/ փող.
Քանաքեռ-Զեյթուն	Կ.Ունեցու փողոց

3) 3-րդ գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Աջափնյակ	Ա. Սարգսյան փող.
Աջափնյակ	Աբելյան փող.
Աջափնյակ	Ալիխանյան եղբայրների փող.
Աջափնյակ	Առաքելյան փող.
Աջափնյակ	Արզումանյան փող.
Աջափնյակ	Գևորգ Չավուշի փող.
Աջափնյակ	Եղիազարյան փող.
Աջափնյակ	Զոհրապի փող.
Աջափնյակ	Էստոնական փող.
Աջափնյակ	Թերլեմեզյան փող.
Աջափնյակ	Լևոնյան փող.
Աջափնյակ	Լուկաշինի փող.
Աջափնյակ	Խ. Խաչատրյան փող.
Աջափնյակ	Կարապետյան փող.
Աջափնյակ	Հասմիկի փող.
Աջափնյակ	Մարտիրոսյան փող.
Աջափնյակ	Մելքումովի փող.
Աջափնյակ	Չուխաջյան փող.
Աջափնյակ	Պարսեղովի փող.
Աջափնյակ	Ռուստամյան փող.
Աջափնյակ	Սիլիկյան թաղ.
Աջափնյակ	Սիսակյան փող.
Աջափնյակ	Վշտունու փող.
Ավան	Ա. Շահինյան փող.
Ավան	Ալմա-Աթայի փող.
Ավան	Աշխաբադի փող.
Ավան	Ավանի համարային փողոցներ
Ավան	Դուշանբեի փող.

Ավան	Թամրուշի փող.
Ավան	Ծարավ Աղբյուր փող.
Ավան	Մալյան փող.
Ավան	Ն. Սաֆարյան փող.
Ավան	Տաշքենդի փող.
Արաբկիր	Վ. Համբարձումյան
Արաբկիր	Ավ. Ահարոնյան
Արաբկիր	Ա. Ավետիսյան փող.
Արաբկիր	Ադոնցի փող.
Արաբկիր	Այգեկցու փող.
Արաբկիր	Գրիբոեդովի փող.
Արաբկիր	Մամիկոնյանց փող.
Արաբկիր	Վրացական փող.
Արաբկիր	Շիրվանզադեի փող.
Արաբկիր	Տիգրանյան փող.
Արաբկիր	Այգեձորի փող.
Արաբկիր	Արաբկիրի համարային փող.
Արաբկիր	Արծրունու փող.
Արաբկիր	Արղության փող.
Արաբկիր	Բարբյուսի փող.
Արաբկիր	Բուդաղյան փող.
Արաբկիր	Բուդապեշտի փող.
Արաբկիր	Գուլակյան փող.
Արաբկիր	Դարաբաղի փող.
Արաբկիր	Երզնկյան փող.
Արաբկիր	Թավրիզյան փող.
Արաբկիր	Խնկո-Ապոր փող.
Արաբկիր	Ա.Խաչատրյան
Արաբկիր	Ղափանցյան փող.
Արաբկիր	Մալխասյանց փող.
Արաբկիր	Մանուշյան փող.
Արաբկիր	Ն. Տիգրանյան փող.
Արաբկիր	Շահումյարյան փող.
Արաբկիր	Ջեյմս Բրայսի փող.
Արաբկիր	Ռիգայի փող.
Արաբկիր	Սևաստոպոլյան փող.
Արաբկիր	Սեպուհի փող.
Արաբկիր	Սոսեի փող.
Արաբկիր	Սունդուկյան փող.
Արաբկիր	Սևքարեցի Սաքոյի փող.
Արաբկիր	Վահագն Դավթյանի փող.
Արաբկիր	Տոլբուխինի փող.
Արաբկիր	Քեռու փող.
Արաբկիր	Օրբելի եղբայրների փող.
Դավթաշեն	Հույսի ավան
Դավթաշեն	Դավթաշեն համարային փող.
Դավթաշեն	Փիրումյանների փող.

Դավթաշեն	Աղաբաբյան փող.
Դավթաշեն	Մելքումով փող.
Էրեբունի	<<Արցախ>> թաղ.
Էրեբունի	Աճեմյան փող.
Էրեբունի	Ավանեստովի փող.
Էրեբունի	Արին-Բերդի փող.
Էրեբունի	Բեռնակիրների փող.
Էրեբունի	Բուռնազյան փող.
Էրեբունի	Գլինկայի փող.
Էրեբունի	Դաշտենցի փող.
Էրեբունի	Երկաթուղայինների համարային փող.
Էրեբունի	Թեյշեբաինի փող.
Էրեբունի	Թորոմանյան փող.
Էրեբունի	Լիսինյան փող.
Էրեբունի	Լոմոնոսովի փող.
Էրեբունի	Լոռիս Մելիքյան փող.
Էրեբունի	Ծատուրյան փող.
Էրեբունի	Ծխախոտագործների փող.
Էրեբունի	Կուստոյի փող.
Էրեբունի	Կոիլովի փող.
Էրեբունի	Մահարու փող.
Էրեբունի	Միչուրինի փող.
Էրեբունի	Մուշավանի 1-ին փող.
Էրեբունի	Նոր Արեշ համարային փող.
Էրեբունի	Նոր Խարբերդ այգ. տար. փող
Էրեբունի	Որմնադիրների փող.
Էրեբունի	Չեռնիշևսկու փող.
Էրեբունի	Ջրաշենի համարային փող.
Էրեբունի	Սևանի փող.
Էրեբունի	Սարի Թաղ թաղ.
Էրեբունի	Սուվորովի փող.
Էրեբունի	Սոֆիայի փող.
Էրեբունի	Վարդաշենի համարային փող.
Էրեբունի	Օստրովսկու փող.
Կենտրոն	Ադանայի փող.
Կենտրոն	Աղայան փող.
Կենտրոն	Աղյուսագործների փող.
Կենտրոն	Այգեստան
Կենտրոն	Ասրիկի փող.
Կենտրոն	Արհեստավորների 1-ին փող.
Կենտրոն	Արհեստավորների 2-րդ փող.
Կենտրոն	Գ. Տեր-Գրիգորյան փող.
Կենտրոն	Գետառի փող.
Կենտրոն	Գևորգ Էմինի փող.
Կենտրոն	Գրողների փող.
Կենտրոն	Եկմայան 1-ին փող.
Կենտրոն	Չավարյան փող.

Կենտրոն	Զարուբյան փող.
Կենտրոն	Ի. Ալիխանյան փող.
Կենտրոն	Լեռ Կամսարի փող.
Կենտրոն	Ծխախոտագործների փող.
Կենտրոն	Կարեն Դեմիրճյան պող.
Կենտրոն	Կորի փող.
Կենտրոն	Հ. Շահինյան փող.
Կենտրոն	Հովհաննես Կոզեռնի փող.
Կենտրոն	Ձորագյուղ ազգագրական թաղ.
Կենտրոն	Ղազար Փարպեցու փող.
Կենտրոն	Մայիսյան փող.
Կենտրոն	Մարտի 8-ի փող.
Կենտրոն	Շարա Տալյան փող.
Կենտրոն	Չայկովսկու փող.
Կենտրոն	Սարմենի փող.
Կենտրոն	Սիմեոն Երևանցու փող.
Կենտրոն	Սուրբ Հովհաննեսի փող.
Կենտրոն	Սուրենյանց փող.
Կենտրոն	Տոլստոյի փող.
Կենտրոն	Օմար Խայամի փող.
Կենտրոն	Ֆիզկուլտուրնիկների փող.
Կենտրոն	Ֆրիկի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Արմին Վեգների փող.
Մալաթիա-Սեբաստիա	Բատիկյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Գ. Զոհրապի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Գազարինի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Դուրյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Իսրայել Օրու փող.
Մալաթիա-Սեբաստիա	Ծերենցի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Կուրդինյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Հովնաթանի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Մամիկոնյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Մանուկյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Մարտիկյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Մեծարենցի փող.
Մալաթիա-Սեբաստիա	Միքայելյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Շրջանային փող.
Մալաթիա-Սեբաստիա	Ոսկանյան փող.
Մալաթիա-Սեբաստիա	Ջիվանու փող.
